ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N - 110
«29» նոյեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա. Նալբանդյանին

*Հարգելի պարոն մարզպետ.*

*Կից Ձեզ եմ ներկայացնում Վարդաբլուր համայնքի ավագանու* 28.11.2016*թ. թիվ* 33-Ա, 34-Ա, 35-Ա, 36-Ն, 37-Ն, 38-Ա, 39-Ա, 40-Ն *որոշումները:*

*Առդիր՝ 16 թերթ:*

*Համայնքի ղեկավար՝* Ռ. Օհանյան

ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀՀ 06400973

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք,
գ. Վարդաբլուր, 093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 33-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով և «Իրավական ակտե մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով,

ավագանին որոշում է.

1. Վարդաբլուր համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմեր ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և հանձնաժողովների անհատական կազմերում ընդգրկ ավագանու հետևյալ անդամներին՝

1. Կարեն Պապոյան
2. Կամո Մանուկյան
3. Գեղամ Վարդանյան

2. ՈՒժը կորցրած ճանաչել Վարդաբլուր համայնքի ավագանու 22.11.2012թ. «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 015-Ա որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պապվականի | | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149 vardablur.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 34-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 08 02 04 4819 ՀՈԴՎԱԾԻՑ 20 000 ԴՐԱՄ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

**Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.**

Վարդաբլուր համայնքի բյուջեի 08 02 04 ծրագրի 4819 հոդվածից փոխանցել.

- 20 000 դրամ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մարաթոն-դրամահավաք 2016»- ին;

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազափի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պապվականի | | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149 vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 35– Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 4637 ՀՈԴՎԱԾԻՑ «ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ 300 000 ԴՐԱՄ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

**Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.**

Վարդաբլուր համայնքի բյուջեի 4637 հոդվածից 300 000 դրամ փոխանցել «Վարդաբլուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 36-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2016Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝ Վարդաբլուր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վարդաբլուր գյուղական համայնքի սեփականության 2016թ. գույքագրման արդյունքները:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պապվականի | [signature] | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 37 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,*
*093146149, vardablur.lori@mta.gov.am*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*«28» նոյեմբերի 2016 թվականի N 38-Ա*

## ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և 60-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

*1.Հաստատել Վարդաբլուր համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:*

*2.Ուժը կորցրած ճանաչել Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 15-ի Վարդաբլուր գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 41-Ա որոշումը:*

*3.Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:*

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | *(ստորագրություն)* | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | *(ստորագրություն)* | | |
| Սահակյան Ներսես Պապվականի | *(ստորագրություն)* | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | *(ստորագրություն)* | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | *(ստորագրություն)* | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված
Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանու
2016 թվականի նոյեմբերի 28-ի Թ - 38-Ա որոշման

# ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հաստիքների քանակը՝ 8:
2. Աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 204 000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150 000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 150 000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 149 000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 2 | 110 000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 77 910 |
| Աղբահանության գծով վարորդ | 1 | 72 760 |

Վարդաբլուր համայնքի
ղեկավար՝ Ռ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 39-Ա

## «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և 60-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «ՀՀ Լոռու մարզ Վարդաբլուրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 15-ի «ՀՀ Լոռու մարզ Վարդաբլուրի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 42-Ա որոշումը:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Մանուկյան Կամո Հայազատի | [signature] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [signature] | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | [signature] | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [signature] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հաստիքների թվաքանակը՝ 6:
2. Աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի տնօրեն | 1 | 94 000 |
| Դաստիարակ | 1.25 | 92 600 |
| Երաժիշտ | 0.25 | 92 600 |
| Բուժքույր | 0.5 | 92 600 |
| Դաստիարակի օգնական | 1 | 77 910 |
| Խոհարար | 1 | 72 760 |
| Հաշվապահ | 1 | 77 910 |

Վարդաբլուր համայնքի ղեկավար՝ Ռ. Օհանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր համայնք, գ. Վարդաբլուր,
093146149, vardablur.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2016 թվականի N 40 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Վարդաբլուր գյուղական համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուր գյուղական համայնքի 2017թ. բյուջեն.

1.Եկամուտների մասով 29250.900 հազար դրամ
2.Ծախսերի մասով 30919.900 հազար դրամ

- վարչական բյուջեի մասով 29250.900 հազար դրամ
- ֆոնդայինբյուջեիմասով 1669.000 հազար դրամ

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Կամո Հայազատի | [ստորագրություն] | | |
| Պապոյան Կարեն Վասիլի | [ստորագրություն] | | |
| Սահակյան Ներսես Պատվականի | [ստորագրություն] | | |
| Վարդանյան Գեղամ Սուրենի | [ստորագրություն] | | |
| Օհանյան Ստեփան Ռուբենի | [ստորագրություն] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վարդաբլուր համայնքի ավագանու
2016 թ. նոյեմբեր 28-ի թիվ 37 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10 000 դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի "ա" պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20 000 դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

2000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

3000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

2000 դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինություններից ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 30000 դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 0 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 0 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 50 000 (հիսուն հազար) դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70 000 (յոթանասուն հազար) դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 700 000 (յոթ հարյուր հազար) դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000(մեկ հազար) դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 (զրո) դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 (մեկ հազար) դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 (հինգ հազար) դրամ:

10.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 (հիսուն հազար) դրամ:

11. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝

ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ.

դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

12. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 3000 դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

14. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 5000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ / Ռ. Օհանյան /

28 նոյեմբերի 2016թ.